ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 12, 1956 Общественные науки

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆ

1956 թվականի դեկտեմբերի 6-ին, երկարատև, ծանր հիվանդությունից հետո վախճանվեց սովետահայ ականավոր արձակագիր, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Դերենիկ Կարապետի Դեմիրճյանը։

Դերենիկ Դեմիրճյանի մահով սովետահայ դրականությունը կորցրեց իր խոշորագույն դեմքերից մեկին, արձակի մի այնպիսի վարպետի, որն իր ստեղծագործական ավելի քան վաթսուն տարիների բեղուն գործունեությամբ հայ արձակ և դրամատիկական գրականությունը հարստացրել է բազմաթիվ մեծարժեք երկերով, որոնք հավետ կապրեն հայ ժողովրդի հետ, որպես նրա հոգևոր կուլտուրայի կլասիկ նմուշները։

Դերենիկ Դեմիրճյանը ծնվել է 1877 թվականին Ախալքալակում։ Նախնական կրթությունն ստացել է գավառական քաղաքի հայկական ծխական դպրոցում։ Դեռևս դպրոցը չավարտած, ծնողների հետ տեղափոխվում է Արտահան, որտեղ նա շարունակում է իր նախնական կրթությունը։ 1892 թվականին Դեմիրճյանը գալիս է Էջմիածին՝ Գևորգյան ճեմարանում շարունակելու ուսումը։ Այստեղ է, որ նա առաջին անգամ մոտիկից հաղորդակից է դառնում ռուսական և արևմտաեվրոպական առաջավոր գրականությանը, տարվում է Պուշկինի, Լերմոնտովի, Գոգոլի, Տոլստոյի, Գյոթեի, Հայնեի և Շեքսպիրի երկերով։

Նույն այդ թվականներից Դեմիրճյանը փորձում է գրել բանաստեղծություններ, որոնք տպագրվում են Տ. Նազարյանի «Տարազ»-ում, ապա «Մուրճ» ամսագրում։

1895 թվականին Գևորգյան ճեմարանում բռնկած աշակերտական խռովությունների պատճառով Դեմիրճյանը թողնում է ճեմարանը, գնում Թիֆլիս, ուսումը շարունակում Ներսիսյան դպրոցում, որն ավարտում է 1897 թվականին։ Այդ ժամանակվանից էլ սկսում է նրա զրկանքներով ու տնտեսական դժվարություններով լի երիտասարդական կյանքը։ Դեմիրճյանը աշխատում է

տարբեր բնագավառներում, ծառայում տարբեր հաստատություններում, բայց միշտ հետևում գրականության, զբաղվում իր ինքնազարգացմամբ։

1890 թվականին Թիֆլիսում լույս է տեսնում նրա բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն։ Նեղ է այդ բանաստեղծությունների ընդգրկման շրջանակը. դրանք արտահայտում են վառ երազներով հասարակական կյանք մտած, բայց հենց առաջին քայլերից հիասթափված պատանու մտորումներն ու որոնումները։ Դեմիրճյանը շարունակում է գրել պոեմներ, բանաստեղծություններ, միաժամանակ մտածելով բարձրագույն կրթություն ստանալու մասին։ 1905 թվականին նրան հաջողվում է մեկնել Շվեյցարիա և հետևել Ժնևի համալսարանի մանկավարժության և գրականության ֆակուլտետների դասախոսություններին։ Առավել մեծ չափով ընդլայնվում է Դեմիրճյանի մտահորիզոնը, նա կապվում է արևմտաեվրոպական առաջավոր մտքի ներկայացուցիչների հետ և 1903 թվականին ավարտելով համալսարանը, վերադառնում է Կովկաս, միաժամանակ հետևում երաժշտության, ապա 1910 թվականից պաշտոնավարում է Թիֆլիսում որպես Հովնանյան դպրոցի հայոց լեզվի և գրականության դասատու։

1912 թվականին լույս է տեսնում Դեմիրճյանի բանաստեղծությունների երկրորդ ժողովածուն։ Այդ թվականներից սկսած՝ Դեմիրճյանը գրում է մի շարք պիեսներ («Վասակ», «Դատաստան», «Ազգային խայտառակություն», «Հովնան մեծատուն» և այլն)։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Դեմիրճյանը գրում է պատմվածքներ, մեծ տաղանդով պատկերելով պատերազմի արհավիրքները, հայ ժողովրդի գաղթն ու տառապանքները։ Այդ պատմվածքներից ուշագրավ են հատկապես «Ավելորդը» և «Ստամոքսը», որոնք մատնում էին արձակի ապագա վարպետին։

Հայաստանում սովետական կարգերի հաստատման առաջին տարիներից Դեմիրճյանը գրում է մի շարք նոր պատմվածքներ («Մաթոն», «Նիգյարը», «Ռաշիդը», «Միայն մեկը», «Ընկերներ» և այլն, կոմեդիաները («Քաջ Նազար», «Նապոլեոն Կորկոտյան», «Ֆոսֆորային շող» և այլն) և «Երկիր հայրենի» դրաման, որոնցում երևում է նրա գաղափարական և ստեղծագործական նկատելի աճը։

Հայրենական Մեծ պատերազմի տարիներին Դեմիրճյանը իր գրիչը ի սպաս դրեց գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ մղված պայքարին, գրելով մի շարք պատմվածքներ («Խոշտանգված ավանդը», «Անխուսափելին» և այլն), որոնցում նա մերկացնում էր ֆաշիստների գազանությունները և ատելություն բորբոքում թշնամու նկատմամբ։

Պատերազմի փոթորկոտ օրերին էր, որ Դերենիկ Դեմիրճյանը գրեց իր ամենանշանավոր և ծավալուն վեպը «Վարդանանք»-ը, որտեղ պատկերված է հայ ժողովրի ազատագրական պայքարը պարսկական բռնապետության դեմ 5-րդ դարում։

«Վարդանանք»-ը լույս տեսնելու հենց առաջին օրերից դարձավ ընթերցող լայն հասարակության սիրելի դիրքը։ Վեպի այդ մեծ հաջողությունը արդյունք էր վարակող ու ջերմ այն հայրենասիրության, որով տոգորված է «Վարդանանք»-ը սկզբից մինչև վերջ։ «Վարդանանք»-ը, ոչ միայն սովետահայ պատմական վեպի փայլուն հաղթանակն էր, այլև սովետական արձակի ամենահաջողված նմուշներից մեկը։

Չնայած իր խոր ծերությանը, Դերենիկ Դեմիրճյանը «Վարդանանք»-ից անմիջապես հետո ձեռնարկեց ծավալուն մի այլ պատմական վեպի՝ «Մեսրոպ Մաշտոց»-ի ստեղծմանը։ Նա չտեսավ իր այս նոր վեպի առանձին հատորով հրատարակությունը, սակայն նոր երկի այն հատվածները, որոնք լույս տեսան «Սովետական գրականություն» ամսագրում, վկայում են, որ Դեմիրճյանը իր ութսունամյակի շեմքին պատմական անցյալը գեղարվեստորեն պատկերել է երիտասարդական ամենավառ երևակայությամբ և հայ գրականությունը հարստացրել մի նոր, կլասիկ ստեղծագործությամբ։

Դերենիկ Դեմիրճյանը իր ստեղծագործության առաջին տարիներից մինչև կյանքի վերջը անդավաճան ընթացել է, մեր ժողովրդի հետ՝ նրա պայքարի բոլոր էտապներում, մեծ վարպետությամբ այդ պայքարը արտացոլելով գեղարվեստական գրականության մեջ։ Նա մեծ հետաքրքրություն է հանդես բերել դեպի հայ ժողովրդի պատմության, գրականության, լեզվի և նրա կուլտուրայի այլ բնագավառների հարցերը դիսկուսիաներում, մամուլում և այլ առիթներով հանդես գալով կուռ տրամաբանությամբ օժտված և խորապես ինքնատիպ ելույթներով ու հոդվածներով, որոնք մեծ արժեք են ներկայացնում և արժանի են հավաքման ու առանձին հատորներով հրատարակվելու։

Դեմիրճյանը բառի լայն առումով ժողովրդական գրող էր։ Նրան գիտեր ու սիրում էր ամբողջ հայ ժողովուրդը։

Սովետական գրականությանը մատուցած ծառայությունների համար, մնայուն այն մեծարժեք ստեղծագործությունների համար, որոնցով նա հարստացրել է սովետական գրականությունը, Դերենիկ Դեմիրճյանը արժանացել է միութենական կառավարության գնահատմանը և պարգևատրվել է Լենինի ու Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշաններով։

1953 թվականին Դ. Դեմիրճյանը ընտրվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ։ Հակառակ իր առողջական վատ վիճակին և խոր ծերությանը, նա մինչև կյանքի վերջին օրերը մոտիկից հետաքրքրվում էր հայ ժողովրդի կուլտուրայի հետ կապված հարցերով, հեղինակավոր իր կարծիքով նպաստում մի շարք հարցերի լուծմանը։

Դերենիկ Դեմիրճյանի թողած գրական արժեքավոր ժառանգությունը նրա անունը կփոխանցեն սերնդե սերունդ։ Նա կապրի հայ ժողովրդի հետ ընդմիշտ, որպես հայ արձակ գրականության խոշորագույն վարպետներից մեկը։